ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի 125
Հեռ.՝ (0265)22255, Էլ. փոստ՝ chambarak.gegharquniq@mta.gov.am

N 291
06 հունիս
2019թ.

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բունիաթյան

Ճամբարակի համայնքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի մարտի 27-ին կնքված թիվ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2019 թվականի ապրիլի 27-ը պետք է իրականացներ Ճամբարակի համայնքապետարանի Դպրաբակ,Բարե-պատ,Անտառամեջ,Ձորավանք գյուղերի ջրագծի ներքին ցանցի կառուցման ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման կատարման աշխատանքներ,ինչը պայմանագրերով սահմանված ժամկետում չի կատարվել:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանգրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը լրացել է 27.04.2019 թվականին:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն է էականորեն խախտել պայմանագիրը:Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները,հիմք ընդունելով «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ Ճամբարակի համայնքապետարանի 2019թվականի հունիսի 05-ին միակողմանի լուծում է «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-19/02» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ ,որ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում Ճամբարակի համայնքապետարանի գանձապետական 900182081324

հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 90 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Միաժամանակ հայտնում եմ,որ պայմանագրի ապահովումը վերը նշված հաշվեհամարին սահմանված ժամկետում չփոխանցելու դեպքում,համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի՝ համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարները գանձելու նպատակով:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ **Ռոբերտ Օհանյան**

Կապ. Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Մարկոսյան
0265 2 30 08